



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ

Լ ՂՀ վերաքննիչ դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ 2-1499/2008թ.
Նախագահող դատավոր՝ Հ.Աբրահամյան
Կ.Սաղյան
Վ.Հովսեփյան

Քաղաքացիական գործ թիվ 2-1499/2008թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

19-ին հոկտեմբերի 2010թ.

ք.Ստեփանակերտ

ԼՂՀ Գերագույն դատարանը վճռաբեկության կարգով՝ կազմով.

նախագահությամբ՝ դատավոր
դատավորներ՝

Շ. Օհանյանի
Ի. Կարապետյանի
Զ. Օհանյանի

դռնբաց դատական նիստում քննելով ըստ հայցի Գարիկ Արմոյի Աբրահամյանի ընդդեմ Անահիտ Արամայիսի Աղասյանի՝ համատեղ սեփականության ներքո գտնվող Ստեփանակերտ քաղաքի Ազատամարտիկների փողոցի թիվ 41 շենքի թիվ 4 մեկ սենյականոց բնակարանից և Շուշի քաղաքի Ղազանչեցոց փողոցի թիվ 74/ա առանձնատնից համապատասխանաբար 1/2 և 1/4 չափով իրեն հասանելիք բաժինն որոշելու պահանջի մասին և ըստ Անահիտ Արամայիսի Աղասյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Գարիկ Արմոյի Աբրահամյանի՝ Գ.Աբրահամյանի մասով ԼՂՀ Շուշի քաղաքի Ղազանչեցոց փողոցի թիվ 74/ա առանձնատան սեփականաշնորհման առոչինչ գործարքի անվավերության հետևանքները կիրառելու՝ նրա մասով սեփականաշնորհման գործարքից ծագող պետական գրանցման պահանջները չպահպանելը՝ գործարքի առոչինչ լինելը ճանաչելու մասին ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2010թ. օգոստոսի 5-ի որոշման դեմ հայցվոր Գ.Աբրահամյանի ներկայացուցիչ Ա.Թարխանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1.Գործի դատավարական նախապատմությունը.

Հայցվոր Գարիկ Արմոյի Աբրահամյանը հայց է ներկայացրել դատարան ընդդեմ Անահիտ Արամայիսի Աղասյանի՝ համատեղ սեփականության ներքո գտնվող Ստեփանակերտ քաղաքի Ազատամարտիկների փողոցի թիվ 41 շենքի թիվ 4 մեկ սենյականոց

բնակարանից և Շուշի քաղաքի Ղազանչեցոց փողոցի թիվ 74/ա առանձնատնից համապատասխանաբար 1/2 և 1/4 չափով իրեն հասանելիք բաժինն որոշելու պահանջի մասին:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2008թ. հոկտեմբերի 29-ի վճռով հայցը մերժվել է:

ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2009թ. սեպտեմբերի 14-ի որոշմամբ բավարարվել է հայցվորի վերաքննիչ բողոքը՝ դատարանի վճիռը բեկանվել է և գործն ուղարկվել նույն դատարան՝ նոր քննության: Պատասխանողի կողմից ներկայացվել է հակընդդեմ հայց:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010թ. հունիսի 14-ի վճռով հաստատվել է կողմերի հաշտության համաձայնությունը և գործի վարույթը կարճվել:

Նշված վճիռը ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2010թ. օգոստոսի 5-ի որոշմամբ թողնվել է անփոփոխ այն պատճառաբանությամբ, որ հաշտության համաձայնությունը կողմերը կնքել են օրենսդրության պահանջների պահպանմամբ:

Վերաքննիչ դատարանի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել հայցվորի ներկայացուցիչ Ա. Թարխանյանը:

Վճռաբեկ բողոքին պատասխան է ներկայացրել պատասխանող Ա.Աղայանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոքը բերվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտման հիմքով:

Ըստ բողոք բերողի՝ դատարանը սխալ է կիրառել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 4-րդ մասը:

Նշված պնդումը պատճառաբանվում է հետևյալ փաստարկներով.

Համաձայն ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 3-րդ կետի՝ դատարանը, նախքան հաշտության համաձայնությունը հաստատելը, կողմերին պարզաբանում է դրա դատավարական հետևանքները:

Նույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ դատարանը չի հաստատում հաշտության համաձայնությունը, եթե այն հակասում է օրենքին և այլ իրավական ակտերին կամ խախտում է այլ անձանց իրավունքները և օրինական շահերը: Այդ դեպքերում դատարանը վեճը քննում է ըստ էության:

Հաշտության համաձայնությունը հակասում է ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի 1-ին մասին, քանի որ այն սահմանափակում է հայցվորի իրավունքները, այն միայն իրավունք է վերապահում պատասխանողին փոխհատուցել Ազատամարտիկների 41/4 բնակարանից հայցվորի բաժնի դիմաց: Բացի դրան, հաշտության համաձայնության մեջ հստակ չի սահմանված ժամկետ այն ի կատար ածելու համար, այլ փոխարենը, մի բնակարանի օտարման գործընթացը կապել են մյուս բնակարանի ճակատագրի հետ:

Բողոքում պատճառաբանվում է նաև, որ առկա է նոր երևան եկած հանգամանք: Այն է՝ նշված հարցերի ձգձգման պատճառով, կապված Բսակովի 2/39 բնակարանի հետ, կողմերի միջև առաջացել է վեճակոփիվ, ինչի հետևանքով հարուցվել է քրեական գործ:

Բողոք բերողը խնդրել է բեկանել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 14.06.2010թ. վճիռը անփոփոխ թողնելու մասին ԼՂՀ վերաքննիչ դատարանի 5.08.2010թ. որոշումը և գործն ուղարկել առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի փաստարկները.

Վճռաբեկ բողոքի պատասխանում պատճառաբանվում է, որ բողոքի հիմքը սխալ է և բողոքը ենթակա է մերժման հետևյալ փաստարկներով.

Սույն գործի հայցի և հակընդդեմ հայցի առարկաները հանդիսանում են ք.Ստեփանակերտի Ազատամարտիկների փողոցի թիվ 41/4 բնակարանը և ք.Շուշի Ղազանչեցոց փողոցի 74/ա հասցեում գտնվող առանձնատունը, այլ ոչ թե ք.Ստեփանակերտի Իսակովի 2/39 բնակարանը: Հետևաբար, հաշտության համաձայնությունը լինելով կողմերի ազատ կամահայտությամբ կնքված փաստաթուղթ, պայմանների կատարումը չի կապում վեճի հետ կապ չունեցող որևիցե այլ բնակարանի հետ:

3.Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Ստեփանակերտի ՔԿԱԳ բաժնի 21.12.1990թ. ամուսնության վկայականի պատճենի համաձայն՝ Գարիկ Աբրահամյանը և Անահիտ Աղասյանը ամուսնացել են 21.12.1990թ.:

2. Ստեփանակերտի քաղաքային խորհրդի գործկոմի և Անահիտ Աղասյանի միջև 28.03.1991թ. կնքված պայմանագրի համաձայն՝ Անահիտ Աղասյանին է վաճառվել Ստեփանակերտ քաղաքի Կիրով /Ազատամարտիկների/ փողոցի թիվ 41/4 բնակարանը: Պայմանագիրը վավերացվել է նոտարական կարգով 29.03.1991թ.:

3. ԼՂՀ Շուշիի շրջանի վարչակազմի ղեկավարի 29.12.1999թ. բնակտարածքների սեփականաշնորհման մասին թիվ 86 որոշմամբ՝ Շուշի քաղաքի Ղազանչեցոց փողոցի 74/ա առանձնատունը հանձնվել է Անահիտ Աղասյանին, որպես ընտանիքի բոլոր անդամների ընդհանուր սեփականություն: Եզրակացության և կից փաստաթղթերի մեջ ընտանիքի կազմը նշված է՝ 4 անձ:

4 Շուշիի շրջանի վարչակազմի ղեկավարի անունից ԼՂՀ ԿԱ ԱԳԿՊԿ Շուշիի տարածքային ստորաբաժանման ղեկավարին հասցեագրված առ 28.08.2008թ. թիվ 2/408 գրության համաձայն՝ Շուշի քաղաքի Ղազանչեցոց 74/ա տան սեփականաշնորհմանը մասնակցել են 4 անձ՝ Անահիտ, Գարիկ, Անժելիկա, Արամայիս Աբրահամյանները:

5. Դատական նիստի ընթացքում 14.06.2010թ. կողմերը կազմել և ստորագրել են հաշտության համաձայնություն (հատոր 2-րդ, գ.թ. 170):

4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Վերանայելով վերաքննիչ դատարանի որոշումը վճռաբեկ բողոքում նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններում՝ Գերագույն դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման, իսկ դատական ակտը՝ թողնելու անփոփոխ, հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի համաձայն, յուրաքանչյուր ոք ազատ է անելու այն ամենը, ինչն արգելված չէ Սահմանադրությամբ կամ օրենքով և չի խախտում այլոց իրավունքներն ու ազատությունները: Իսկ Սահմանադրության 44-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված է իր իրավունքները և ազատությունները օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու յուրաքանչյուրի իրավունքը:

Համաձայն ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասի՝ կողմերը դատավարության ցանկացած փուլում կարող են գործն ավարտել հաշտության համաձայնությամբ:

Հաշտության համաձայնությունը կողմերի միջև դատարանից դուրս կամ դատարանում կնքվող պայմանագիր է, որի ուժով նրանք փոխադարձ կամ միակողմանի զիջումների ճանապարհով վիճելի իրավահարաբերության գծով նորից են որոշում իրենց իրավունքներն ու պարտականությունները, դրանով վերացնում իրենց միջև եղած վեճը: Հայցվորը (հայցվորները) այս դեպքում, որպես կանոն, հրաժարվում է իր պահանջների մի

մասից կամ փոխում է այդ պահանջները, իսկ պատասխանողը (պատասխանողները) իր հերթին ընդունում է հայցվորի նվազեցրած կամ փոխած պահանջները:

Կողմերի միջև կայացած հաշտության համաձայնությունը քաղաքացիական դատավարության լավագույն ավարտն է:

Սույն գործով հաստատված է, որ կողմերն՝ իրենց բարձրագույն իրավաբանա-կան կրթություն ունեցող ներկայացուցիչների հետ, սույն վեճը դատարանում մոտ 2 տարի քննելուց հետո, կնքել են գրավոր հաշտության համաձայնություն, որը համապատասխանում է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին:

Դատարանը, ստուգելով հաշտության համաձայնության օրինականությունը, որևէ հիմք չի ունեցել այն չհաստատելու, քանզի ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, դատարանը չի հաստատում հաշտության համաձայնությունը միայն այն դեպքում, եթե այն հակասում է օրենքին և այլ իրավական ակտերին կամ խախտում է այլ անձանց իրավունքները և օրինական շահերը:

Նման պայմաններում վերաքննիչ դատարանը ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վճիռը հիմնավոր է թողել անփոփոխ:

Հետևաբար, անհիմն են բողոքի փաստարկները՝ դատարանի կողմից ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի պահանջների խախտման մասին:

Բողոք բերած անձն որևէ ապացույց չներկայացրեց հաշտության համաձայնությունը հակառակ իր կամքին կնքելու վերաբերյալ:

Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքում ք. Ստեփանակերտի Իսակովի 2/39 բնակարանը վկայակոչելուն, ապա Գերագույն դատարանն արձանագրում է, որ այն սույն գործով վեճի առարկա չի հանդիսացել, հետևաբար բողոքաբերի որևէ իրավունքի խախտման մասին խոսք չի կարող լինել:

Նոր երևան եկած հանգամանքի մասին բողոքի պատճառաբանությունն անհիմն է հետևյալ հիմնավորմամբ.

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 196-րդ հոդվածի համաձայն՝ նոր երևան եկած հանգամանքները հիմք են դատական ակտի վերանայման համար, եթե՝

1) բողոք ներկայացրած անձն ապացուցում է, որ այդ հանգամանքները հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել գործին մասնակցող անձանց, կամ այդ հանգամանքները հայտնի են եղել գործին մասնակցող անձանց, բայց նրանցից անկախ պատճառներով չեն ներկայացվել դատարան, և այդ հանգամանքները գործի լուծման համար ունեն էական նշանակություն.

2) դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված՝ վկայի ակնհայտ կեղծ ցուցմունքները, փորձագետի ակնհայտ կեղծ եզրակացությունը, փաստաթղթերի կամ իրեղեն ապացույցների կեղծված լինելը հանգեցրել են ապօրինի կամ չհիմնավորված դատական ակտ կայացնելուն.

3) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատվել է, որ գործին մասնակցող անձինք կամ նրանց ներկայացուցիչները կամ դատավորը, գործի քննության հետ կապված, կատարել են հանցավոր արարք.

4) վերացվել է այն դատական ակտը, դատավճիռը կամ այլ մարմնի որոշումը, որը հիմք է ծառայել տվյալ վճռի կայացման համար:

Մինչդեռ, բողոքում բացակայում է վերը նշված հիմքերի որևէ մեկի առկայության հիմնավորումը:

Այսպիսով, Գերագույն դատարանը գտնում է, որ վերաքննիչ դատարանի որոշումը օրինական է, հիմնավորված և պատճառաբանված, հետևաբար այն պետք է թողնել անփոփոխ:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով, ԼՂՀ Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց Ը

1. Գ.Աբրահամյանի ներկայացուցիչ Ա.Թարխանյանի վճռաբեկ բողոքը մերժել: ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2010թ. օգոստոսի 5-ի որոշումը թողնել անփոփոխ:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝

Շ. ՕՀԱՆՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝

Ի. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Զ. ՕՀԱՆՅԱՆ